Արձանագրություն N 4

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/144» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

15.07.2019 թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչատրյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան /գնահատող/, Հ. Մարտիրոսյան /գնահատող/
Հ. Թորոսյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Խաչատրյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի որի մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն բացառությամբ՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ի որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որը գերազանցում է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշեց, նիստը կասեցնել և առաջարկել «Էկոֆորմ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

1.3 Համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

1.4 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկաների իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ա. Խաչատրյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել երեք աշխատանքային օր հետո, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Խաչատրյան

Անդամներ՝ ---------- Ա. Գասպարյան

---------- Հ. Մարտիրոսյան

---------- Հ. Թորոսյան

---------- Ա. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան